

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքների ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը



You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

---

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ  
ԱԿՏԻՎ ԻՍՏԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ



Պետքատի ապարան  
Կավիտ 7677 (բ)  
Պատվեր 863  
Տիրամ 3000

Հանձնված է արտադրության 13/111 32 Բ. Ս. Ս. Ե.  
Ցղադրված է 23 մարտի, 1982 թ.

1. ՊԱՏՔԱՐԻ ՅԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒՂԻՆ

Կադիստրալիստական աշխարհն սպրում է ծայրահեղ տնտեսական կրիզիս:

Կանգ են առնում դործարաններն ու ֆաբրիկաները: Հանդչում են հնոցներն, աճում է գործադուրկների բանակը. որսործե ավելանում է բազայված գյուղացիների թիվը: Պրոլետարական և աշխատավոր գյուղացիների մասսաները մատնված են սովի: Մեղ մտո՝ ԽՍՀՄ-ում վերացված է գործադրկութունը, անընհատ աճում է մասսաների կյանքի էությունական և նյութական մակարդակը:

Ամեն որ նոր հաղթանակներ է բերում սոցիալիստական շինարարության ճակատին:

«Անցած տարվա ընթացքում մեր ծանր արդյունաբերությունը վտարի յե կանգնեցված և դրանով իսկ ստեղծված է սեփական պատվանդան ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման համար, — պատվանդան սոցիալիստական խոշոր մեքենայական ինդուստրիայի համար»:

(17-րդ կուս. կոնֆ. վերջում)

«Մեծ են մեր հաղթանակները և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման դործում: Ոորհրդային Միությունը մանր և փոշիացած հողագործության յերկրեց կուլեկտիվացման, խորհրդային տնտեսությունների ծավալման և մեքենայական տեխնիկայի կիրառման հիման վրա, դարձավ ամենախոշոր հողագործության յերկիրն աշխարհում»:

(17-րդ կուս. կոնֆ. վերջում)

Այս հաղթանակներն ունեն համաշխարհային պատմական նշանակություն: Հնդամ յակի յերրորդ տարում ավարտված է սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը:

Սոցիալիստական շինարարության մեծագույն հաղթանակները բոլոր բնադավառներում, հետևանք են բանվոր դատակարգի և աշխատավոր գյուղացիության խոշորագույն ակտիվության, սոցմրցման և հարվածայնության մեծագույն ամժան և կոմունիստական կուսակցության յենինյան գծին:

1932 թ. սոցիալիստական շինարարության արագընթաց աճի սրուցեսը շարունակվում է ավելի ուժեղ տեմպերով: Այս տարի ժողովրդական յեկամուտը հասնում է 49,2 միլիարդ ուսրու, այսինքն՝ 1931 թ. դիմաց տալիս է աճում 30 %-ով:

Արդյունաբերության պրոդուկցիայի աճը կհաղմի 36%: Այդ նշանակում է, վոր 1932 թ. հնդամ յա սլյանն ամբողջապես կկատարվի:

Գյուղացիական տնտեսության ընդարկումը կորեկտիվացմամբ կկազմի մոտավորապես 72—75%, «դա նշանակում է հիմնականում կորեկտիվացման ավարտումը,—դա նշանակում է կուլակության լիկվիդացիան—վերջին դասակարգի» (ԿՈՒՅԲԻՇԵՎ) :

Ժողովրդական տնտեսության բնորոշ գիծը 1932 թ. կայանում է արտադրության խոշորագույն զարգացման, շինարարական հսկայական ծրագրի և բանվորության ու կոլտնտեսական մասսաների բարեկեցության լավացման մեջ :

«Մենք նշում ենք ժողովրդական տնտեսության ծավալման խոշորագույն ծրագիր այն ժամանակ, յերբ ամբողջ աշխարհում կատարարար ծավալվում է մեծագույն ճգնաժամ և ամբողջ կապիտալիստական սիստեմն ապրում է վերլուծման շրջան» (ԿՈՒՅԲԻՇԵՎ) :

### ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական շինարարության աճին համապատասխանում է պետական բյուջեյի աճը, վորի ընդհանուր ծավալը 1932 թ. համար նախագծված է 27,5 միլիարդ ուր. :

Պետական բյուջեյի 1932 թ. գումարն ավելի քան յերկու անգամ դեբադանցում է հնգամյա պլանում այս տարվա համար նախատեսված դուրսերից :

Պետական բյուջեյի հիմնական յեկամուտներից մեկը բնակչության միջոցներն են, ըստ վորում այս յեկամուտային հոդվածի մուտքերի մեջ խոշոր դեր են կատարում փոխառությունների ու խնայողական դրամարկղների մուտքերը, վորոնք պետությանը պետք է տան 3,3 միլիարդից ավելի դուրսեր :

Այսպիսով բնակչության միջոցների դերը, վորոնք պետք է հավաքվեն պետական փոխառությունների և խնայողամարկղների միջոցով, չափազանց մեծ է :

Սորհրդային Միության Ֆինանսական տնտեսության այս մասերին պետք է առանձին ուշադրություն հատկացվի, քանի վոր փոխառությունների և խնայողամարկղների գծով միջոցների մղելիդացիան կկատարվի միայն այն ժամանակ, յեթև հասարակայնությունը դերազանց ուշադրություն դարձնի այդ հարցին :

Կուսակցությունը և կառավարությունը խնայողական ապարատին պատվի բել են 1932 թ. ավանդների մնացորդը ավելացնել 575 միլիոն ուր. :

Այս խնդիրը պետք է կատարվի և նա կկատարվի, բայց դրա համար հալ կավոր է առաջին հերթին մոբիլիդացիայի յենթարկել մասսաները, վճռականորեն պայքարելու այն բոլորի դեմ, վոր խանգարում է ծավալել խնայողամարկղների գործը, ինչ վոր չի թողնում նրան աճելու :

Ապա դրա համար անհրաժեշտ է, մեր հասարակայնության պետվարկի և խնայ. գործի ոժանդակ հանձնաժողովներին, հասարակական հրահանգիչներին, փոխառության գծով պարզևատրված աշխատողներին, խաղարկության հանձնաժողովի անդամներին և ստորին ցանցի ամբողջ ակտիվին յերեսով դառնալ, դեպի ազիտացիոն—մասսայական ու

քաղաքական աշխատանքը, յերեսով դառնալ դեպի խնայողական ապարատի կազմակերպչական տեխնիկական ամրացումը :

Մրա հետ միաժամանակ անհրաժեշտ է ամբողջ խնայողական ապարատը մոտեցնել մասսաներին, թարմացնել և լրացնել նրան բանվորներիով և կոլտնտեսականներով :

Մռաջին հնգամյակի ավարտական տարին պետք է դառնա խնայողամարկղների բոլոր աշխատանքների վճռական բեկման տարի :

Չպետք է և չպիտի լինի այնպիսի դրություն, ինչպես մենք ունենք մինչև այժմ, յերբ խնայողամարկղները հետ են մնում սոցիալիստական շինարարության ընդհանուր տեմպերից :

Մնայողամարկղները պետք է լրիվ կերպով դրված լինեն ծառայելու սոցիալիստական շինարարության : Մեղիքը կայանում է նրանում, վոր 1932 թ. մեր խնայողամարկղները դառնան խորհրդային կուլտուրական հիմնարկներ, ընդունակ կատարելու և դերակատարելու կուսակցության և իշխանության հանձնարարությունները :

Այնպիսի դրությունը, յերբ խնայողամարկղներն աշխատում է յին «կազմունի ձևերով», կղղիացած քաղաքի պրոլետարիատի և գյուղի կոլտնտեսական հասարակայնությունից, պետք է լիկվիդացիայի յենթարկվի :

Մնայողամարկղները և պետփոխառությունները, վորոնք ներկայցնում են սոցիալիստական շինարարության ֆինանսավորման կարևորագույն աղբյուրները, պետք է լինեն խորհրդային հասարակայնության ուշադրության կենտրոնում, պետք է ստանան մասսայական կազմակերպություններից մշտական ոգնություն, կուսակցության և իշխանության կողմից, խնայողական ապարատի վրա դրված խնդիրները հաջողութամբ կատարելու համար :

### 3. ԼԱՎԱՑՆԵԼ ԽՆԱՅՊԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԲԸ Ս) ԱՆԲԱՎԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1931 թ. խնայողամարկղները պետք է ավելացնեն ավանդների մնացորդները 400 միլիոն ուր. , փաստորեն նրանք ավին միայն 270 միլ. ուր. :

Արդեն այս մեկ մոմենտը բավական է, վորպեսզի ասել, վոր խնայողամարկղները 1931 թ. չկարողացան կատարել տված խնդիրը :

Իսայց խնայողական ապարատը չկարողացավ լուծել նաև մյուս հիմնական խնդիրը, այն է՝ 20 միլիոն ավանդատուների շահերի սպասարկումը :

Ինքնին հասկանալի յե, վոր մի շարք խնայողամարկղներ հաջողութամբ լուծեցին այս խնդիրները, բայց խնայողական ապարատն ամբողջապես աշխատեց անբավարար և չկատարեց հանձնարարությունը բարենպաստ պայմանների ներկայության դեպքում անգամ . այս դրության դեմ պետք է տանել վճռական պայքար և այնպես լավացնել խնայողամարկղների աշխատանքը, վոր ապահովվի ավանդների ներգրավման հանձնարարության կատարումն ու գերակատարումը :

Պետք է հայտարարել անողոք պատերազմ այդ բնորին, վորը խանգարում է ավանդատուներին և պարապտոմաստերին կանոնավոր սպասարկելու գործին :



11-244869

Պետք է անմիջապես պարզել այն պատճառները, վարոնք խանդարում են խնայողամարկղներին և յետանդուն ձևով, բայց չեն կորեն վերացնել նրանց:

Սա—անպայամանքն մեր հասարակայնության դործն է, ակտիվիստների դործն է, յուրաքանչյուր ամանդատովի դործն է:

Խնայողամարկղների կողմից 1931 թ. պլանը չկատարելու հիմնական պատճառներն են՝

1. Խնայողամարկղի սպարատի կտրվածութունը հասարակայնութունից:
2. Խնայողամարկղի շուրջ յեղած մասսայական աշխատանքի թուլութունը:
3. Աշխատատուների և պարտատուների տերերի նկատմամբ անհնալիք հողատարության խնդիրների չհասկանալը:
4. Խնայողամարկղների քանակական թույլ ցանցը և նրա սխալ բաշխումը:
5. Խնայողամարկղների նյութական և տնտեսական վատ բաղաժ:
6. Խնայողամարկղում բանվորական և կոլտնտեսական խավերի անբավարար թիվը:
7. Խնայողության պրոպագանդայի բացակայութունը:

### Բ) ՀԵՆՎԵԼ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Խնայողական սպարատի կտրվածութունը քաղաքում բանվորական և գյուղում կոլտնտեսական հասարակայնութունից, զրկում է նրան հաշվի առնել աշխատավորության ամենորյա պահանջները, կատարել աշխատանքը մասսաների ընթացիկ շահերի համաձայն և ստանալ ուժ և ոգնություն այդ հասարակայնութունից:

Խնայողամարկղը չի կարող արդյունավետ աշխատել, յեթե նա անբազ կերպով չի կապված հասարակայնության հետ, յեթե նա իր ամենորյա աշխատանքում չի ստանում ոգնություն մասսայական կազմակերպութուններից և իրենց իսկ մասսաներից, յեթե նա իր ամենորյա աշխատանքներում չի հենվում հասարակայնության վրա:

Խնայողամարկղների դործունելության աշխուժացման դործում մեծական դեր պիտի խաղա մասսայականութունը. քաղաքում—բանվորական, գյուղում—կոլտնտեսական:

Ռոմանդակ հանձնաժողովի անդամները, հասարակական հրահանգիչները, խաղարկության հանձնաժողովի անդամները, պետավարիի հարվածայինները և խնայողործի մյուս ակտիվիստները պետք է դառնան խնայողական սպարատի և հասարակայնության կապը կազմակերպողները, միշտ ակտիվացնելով այդ կապը:

Խնայողամարկղների պարզանդանը գարձնելով հասարակայնութունը, խոչոր նշանակութուն ունի ձեռնարկների շեփության ծավալումն սպարատի նկատմամբ:

Չկա համարյա վոչ մի խոչոր խնայողամարկղ, վորը չունենար իր ձեռնարկային շեփը, բայց բանը նրանումն է, վոր արածին շեփերը վատ են աշխատում, իսկ յենթաշեփ խնայողամարկղները չեն մտածում ամբացնել կապը իրեն շեփի հետ և յերկբորդ՝ շեփությունը դեռ այն

պիտի դարձացում չի ստացել, վոր վաքը դրամարկղները ևս ունենան իրենց շեփը—ձեռնարկից:

Շեփի վոչ բավարար կապն իր յենթաշեփ խնայողամարկղի հետ վատ աշխատանքի պատճառներից մեկն է հանդիսանում:

Հենց դրա համար ել անհրաժեշտ է ուշադրություն գարձնել շեփության լրիվ ոգնութունի վրա:

Խնայողամարկղի նկատմամբ բանվորական սխտեժատիկ հակողություն կիրառելու և նրանց ակտիվացնելու՝ կատարելու համար խնայողամարատի առաջ դրված խնդիրները:

### Գ) ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Թույլ աշխատանքի յերկրորդ պատճառը միանգամայն անբավարար մասսայական աշխատանքն է, կամ նույնիսկ նրա միանգամայն բացակայությունը հենց իր խնայողամարկղի ապարատում, և խնայողամարկղի շուրջը յեղած աշխատավորների կոլեկտիվներում:

Շամտ արդյոք կարելի յե հաշվել այնպիսի կոլեկտիվներ, վորանց ասելով է սխտեժատիկ ազիտացիոն—բացատրական աշխատանք խնայողամարկղների նշանակության մասին՝ թե իր աշխատավորի և թե սոցիալիստական շինարարության համար:

Շամտ են արդյոք խորհրդային Միության մեջ այնպիսի ոժանդակ հանձնաժողովներ, վորոնք իրենց մոտ, ձեռնարկներում, հիմնարկներում և կոլտնտեսութուններում կազմակերպել են փոխառության և խնայողործի անկյուններ և տանում են այնտեղ մասսայական աշխատանք, ցույց են տալիս հաջողություններն ու թերությունները և վորձի հիման վրա ձևեր են ստալարիում խնայողամարկղների աշխատանքների լավացման համար:

Նման ոժանդակ հանձնաժողովներ ամբողջ ԽՍՀ Միությունում կարելի յե հաշվել չավազանց քիչ:

Հարյուր, հազար ոժանդակ հանձնաժողովներ քաղաքում և գյուղում չեն զբաղվում մասսայական աշխատանքով, չեն զբաղվում մասսաներին կազմակերպելով՝ խնայողական սպարատին ոգնելու համար, չեն զբաղվում խնայողության պրոպագանդայով:

Անբավարար չափով և ոժանդակ հանձնաժողովների մեջ տարածված սոցմրցումը և հարվածայնութունը խնայողործի համար լավագույն ազիտ—մասսայական աշխատանք կազմակերպելու համար:

### Դ) ՈՒՇԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՆՌԱՏՈՒՄ

Վատ է դործը հենց խնայողական սպարատում: Սոցմրցումն ու հարվածայնութունն ընդգրկել է միայն խնայողամարկղների փոքրութիվ մասը, իսկ նման խնայողամարկղի սպարատի ներքում վոչ բարձր աշխատողներն են մրցում՝ իրենց աշխատանքը լավագույն ձևով կատարելու համար:

Եսն դեռևս բավականին շատ այնպիսի դրամարկղներ, վորոնց աշխատակիցները չլուսամուտի մուտք նստում են սահմանված ժամանակում, չմտածելով ազիտացիայի, մասսայի հետ կապվելու, ավանդատուներին խնայողործի լավացման աշխատանքի մեջ ներգրավելու մասին,

Նման աշխատակիցները չեն հասկանում խնայողամարկղներին առաջ դրված աշխատանքները, չեն ըմբռնում խնայողամարկղներին անելիքը տասնյակ միլիոն ավանդատուների և պարտատուների պահողների նկատմամբ:

Այստեղից հաճախ բյուրոկրատիկ վերաբերմունք ավանդատուների նկատմամբ, նրանց շահերի մոռացում, արհամարումն ավանդատուի հարմարության հարցերին:

Այս բոլորը դանդաղեցնում է խնայողական սպարառի աշխատանքը, խանգարում է նրան հանձնարարութունները կատարելու:

Խնայողամարկղի ավանդատու աշխատավորներն այժմ վրձ թե հասարակ «կլիխեաններ» են, վորոնք պահում են իրենց դրամները խնայողամարկղում, այլ նրանք սոցիալիզմի շինարարության գիտակից մասնակիցներն են, վորոնք իրենց խնայումները բերում են խնայողամարկղ նրա համար, վոր խնայողամարկղի հավաքած միջոցները դնան յերկրի ինդուստրացիան գործին:

Հենց դրա համար ավանդատուի նկատմամբ յեղած վերաբերմունքը պետք է լինի միանգամայն այլ՝ քան այն, ինչ յեղել է մինչև որս:

Այդ վերաբերմունքը պետք է լինի այնպես, վոր սպահոված լինի ավանդատուի շահագործութունը, նրանց պիտի մասնակցութունը դրամարկղի կյանքում: Այդ վերաբերմունքը պետք է լինի կուլտուրական և զերծ բյուրոկրատիզմից և գրասենյակային քաջշուկից:

### 36) ԱՍԵՂԾԵԼ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱՄԱՐԿՂ

Թե՛ մասամբ խնայողամարկղները դանվում են իրենց գործունեությունից անհամապատասխան շենքերում, կեղտոտ, անշուք, օտոն, խոնավ և կենտրոնից ու կորեկտիվ կյանքից հեռու:

Մաքուր, լուսավոր, տաք, չուքով խնայողամարկղը յեղածի բացառություն է: Մրա մեջ է խնայողամարկղների վրա աշխատանքի պատճառներից մեկը:

Մեր աշխատանքը կայանում է նրանում, վորպեսպի մեր ըուրբ խնայողամարկղները դառնան կուլտուրական հիմնարկներ, աշխատելով առանց ամբոխի խոնավելու և առանց հերթի:

Միանգամայն պիտի և, վոր բանվորը, կուլտուրականը, աշխատավորը հաճույքով կգնա լուսավոր, չուքով (УЮТ И ТЕПЛО) խնայողամարկղի շենքը քան թե կեղտոտ, խոնավ և անշուքը:

Այս պատճառով հասարակայնությունը, ոժանդակ հանձնարողությունները, յուրաքանչյուր պիտիվիտտ պետք է սպաքարեն խնայողամարկղի լավ շենքի, նրա կուլտուրական ձևավորման համար: Քանի, վոր կուլտուրական խնայողամարկղի համար տարվող պայքարը—պայքար է և այն խնդիրների լուծման համար, վորոնք կանգնած են խնայողամարկղի առաջ:

### 2) ՊԱՅԻՍՐԵԼ ԿԱԴՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շատ հաճախ խնայողամարկղի ապարատի աշխատողները չեն հասկանում, չգիտեն այն հոծ ավանդատուների կենցաղի ու կյանքը, վորոնք հետ ամեն որ նրանք հանդիպում են:

Այստեղից—բյուրոկրատիկ վերաբերմունք ավանդատուների և պարտատուներ պահողների նկատմամբ:

Սա անկասկած մեծ բաց է խնայողամարկղի աշխատանքներում, քանի վոր խնայողամարկղը սպասարկում է աշխատավոր մասսաների կենցաղային շահերին: Հասարակայնությունը պետք է ոգնություն ցույց տա խնայողամարկղներին լավագույն ակտիվիտետներ տալով, նամանավանդ գյուղ—խնայողամարկղներին, կուլտուրականներից:

Մրա հետ մեկտեղ հասարակայնությունը պետք է ունյալ ոգնություն ցույց տա խնայողական սպարատին գոյություն ունեցող կադրերի վորակը բարձրացնելու համար:

Սա մեծ է չափազանց եյական խնդիր է, վորի լուծումը կնպաստի խնայողամարկղի աշխատանքների լավացման:

### 6) ԶԱՐԳԱՑՆԵԼ ԽՆԱՅՈՂԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՑԱՆՑԸ

Մեծագույն դեր պետք է կատարի հասարակայնությունը խնայողամարկղների ցանցի վերապլանավորման և զարգացման գործում:

Յուրաքանչյուր խնայողամարկղի աշխատանքի հաջողության տեսակետից կարևոր է վոչ միայն այն, վոր նա լինի կուլտուրական հիմնարկ, վոր նրա արտաքին ու ներքին ձևավորումը համապատասխանի աշխատավորության շահերին, վորպեսպի նրա մեջ չլինի բյուրոկրատիզմ և այլն, կարևոր է, վոր նա լինի համապատասխան տեղում, նրա տեղը հարմար լինի բնակչության այն խմբի համար, վորին սպասարկելու յե խնայողամարկղը:

Հենց ոժանդակ հանձնարողություն այս կարող է վորոշել: Նա ավելի շուտ կարող է վորոշել և պարզել, վոր այս գյուղում հարկավոր է խնայողամարկղ և հարևան գյուղում նա պետք չէ, վոր խնայողամարկղը գործարանում պետք է վերակազմել, վորպես բարձր տիպի դրամարկղ:

Մեր խնդիրն է խնայողամարկղների ցանցի զարգացումը, բայց այդ գործը պետք է զարգացնել վոչ մեխանիկորեն, այլ աշխատավորության եյական պահանջների համեմատ:

### Ը) ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈՊԱԿԱՆԻՍ ԱՆԵԼ

Վերջապես խնայողության պրոպագանդան: Այս հարցին մինչև հիմա չի հատկացված անհրաժեշտ ուշադրություն:

Մինչդեռ մենք պետք է սիստեմատիկ կերպով որորի վրա պրոպագանդա անենք խնայողության համար, վորպես նախապայման առավելագույն չափով ոգնագործելու համար աշխատավորության լայն մասսաների խնայողությունը քաղաքում և գյուղում, Ֆինանսավորելու համար ծավալված սոցիալիստական հարձակումն ամբողջ Փրոնտով:

Պետք է հիշել ընկ. Լենինի հայանի խոսքերը՝ «հետագա խնայումները պահել մեր խոշոր ինդուստրիայի զարգացման համար»: Առանց խնայման դադարի մշտական պրոպագանդի, մեզ համար դժվար կլինի կատարել ԻՆՎԷԻ պատգամը:

Մնաթման պրոպագանդայի բացակայությունը մեծագույն սորմոդ

ե հանդիսանում խնայողքամարկղի հիմնական խնդրի միջոցների մոբիլիզացիայի կատարման գործում:

Խնայողութեան լավ պրոպագանդան կտար միանգամից ավանդների անում (ПРИМЕР):

Հենց գրա համար պետվարկային հասարակայնութունը պետք է սերտ կերպով մոտենա այս հարցին և լուրջ կերպով նրանով զբաղվի: Միութեան Կ.Գ.Կ. նախագահութեան կից կենտրոնական ոժանդակ հանձնաժողովի հրահանգում առանձին տեղ և տրված խնայողութեան պրոպագանդի գործի ծավալմանը:

Երախանութեան մեջ ոժանդակ հանձնաժողովները չեն ուղտագործել հրահանգի կոնկրետ ցուցմունքներն այն մասին, թե ինչ մեթոդներով և ինչ կարգով պետք է ծավալել այդ աշխատանքը:

Այս բացը մենք պետք է լիկվիդացիայի յենթարկենք՝ վորքան կարելի է շուտ, քանի վոր նա խնայողքամարկղների վատ աշխատանքի պատճառների մեկն է:

#### 4. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՐՇԱԿ

Լիկվիդացիայի յենթարկելու համար խնայողքամարկղի թերութունները, նրա աշխատանքի մեթոդի վճռական փոփոխման, խնայողքամարկղի տակ ամուր հասարակայնութեան բազա ստեղծելու, խնայողքամարկղները խորհրդային կուլտուրական հիմնարկներ դարձնելու, միջոցների մոբիլիզացիայի պլանների կատարման համար անց է կացվում մասսայական արշավ:

Մասսայական արշավը պետք է բարձրացնի խնայողքամարկղների նշանակութունը մեր հիմնարկների ընդհանուր սիստեմում, պետք է վերացնի խնայողքամարկղների նկատմամբ, վորպես յերբուրդական հիմնարկութեան, յեղած կարծիքը:

Մասսայական արշատանքը պետք է ստեղծի նախապայմաններ մշտական, զեկատից, զեկատ կատարելու համար միջոցների մոբիլիզացիան՝ փոխառութունների, ավանդների, նպատակային կուտակումների, ապահովագրման և խնայողքամարկղների կողմից կատարվող այլ գործարքների դժով:

Արշավը պետք է վերջ դնի այժմյան կեղտոտ, վոչ ակուրատ խնայողքամարկղին:

Արշավի հետևանքով ներկայիս խնայողքամարկղները պետք է վերածվեն կուլտուրական, խորհրդային մեթոդներով աշխատող, որինտելի, հասարակական հիմնարկի՝ մոտիկ և հասկանալի յուրաքանչյուր աշխատավորի համար, ընդունակ կատարելու կուտակցութեան և իշխանութեան կողմից մեզ տրված խնդիրները:

Մասսայական արշավը տարբերվում է անցած տարիներում անցկացված «միսսայակներից» նրանով, վոր նա ի նկատի ունի վոչ միայն քաղաքական աշխատանք տանելու խնայողքամարկղի խնդիրների, նպատակների և միջոցների մոբիլիզացիայի համար, այլև ապարատի կազմակերպչական և տեխնիկական ամրացման համար, վորպեսզի արշավի հաջողութունները լինեն կայուն:

Վորո՞նք են այն կոնկրետ աշխատանքները, վոր կանգնած են հասարակայնութեան և ապարատի առաջ մասսայական արշավի միջոցին:

Նրանք հիմնականում հանդուս են հետևյալներն:

1. Հասարակայնութեան ակտիվացումն խնայողքամարկղի խնդիրների նկատմամբ, պետվարկային հասարակայնութեան ուշադրութեան կենտրոնացումն խնայողքամարկղի աշխատանքների յայնացման վրա՝ խնայողքամարկղների կազմա-տեխնիկական ամրացման ճանապարհով:

2. Խնայողական գործի յայն հանրայնացման և խնայողքամարկղների գործի քաղաքական բարձրութեան վրա դնելուն:

3. Խնայողութեան պրոպագանդային, վորպես նախապայման քաղաքի և դյուղի աշխատավոր յայն մասսաների խնայումների ավելի մեծ մասի ուղտագործման, Ֆինանսավորելու համար սոցիալիստական ընդլայնած հարձակումն ամբողջ ճակատով՝ Ֆինանսավորելու համար հնգմյակի ավարտական տարվա մոդուլրգա-սնտեսական շինարարութեանը:

4. Խնայողքամարկղների ապարատի տեսը (СМОТ) կազմակերպելու նրան աշխատանքի բովանդակութեան, մեթոդների տեսակետից և ապարատի համապատասխանումը նրա վրա դրված 1932 թ. խնդիրներին:

5. Ավանդատուների և պարտատուների ունեցողների նպատակման գործի վորոչակի յայնացման, մասնավորապես կազմակերպելով կոլեկտիվներում տեղեկատու անկյուններ, խնայողութեան ապարատում բյուրոկրատիզմի և քաջընկի դեմ պայքարելու, խնայողքամարկղի աշխատողների ուշադիր վերաբերմունքի համար դեպի ավանդատուները:

6. Խնայողքամարկղների նյութա-տեխնիկական բազայի յայնացման:

7. Մասսայական արշավի միջոցով կազմակերպելու և ամրացնելու, ամուր հասարակական բազա և վերապես՝

8. Պետական վարկի և խնայ. գործի հասարակական ակտիվին (սժանդակ հանձնաժողովներ, հասարակական հրահանգիչներ, ճժրդ վճռական փոխառութեան պարզեացումը ակտիվ խաղարկութեան հանձնաժողովի անդամներ և այլն) մշտական աշխատանքի ներդրողներուն և յետանդուն աշխատանքի ծավալելուն նրանց հետ, մասնավորապես ակտիվին մշտական ազիտ նյութերով մատակարարելով, կենդանի հրահանգներ տալով և արն:

Այս են մասսայական արշավի հիմնական խնդիրները: Այս խնդիրներին պետք է ավելացնել այն հարցերը, վորոնք կանգնած են առանձին խնայողքամարկղների առաջ:

Արշավի խնդիրների հաջողակի լուծումը կախված է գլխավորաբար ցույց տված միջոցառումների մեջ ամբողջ բանվորական և կուտակեսական մասսաների մասնակցութեան աատիճանից:

Արշավը պետք է շարժի հասարակայնութեան և մասսաներին. դրանում և արշավի ամբողջ միտքը, քանի վոր հասարակայնութեան ուշադրութեան կենտրոնացումը խնայողական գործի հարցերի վրա, առաջին քայլն է խնայողքամարկղներին, մասսայական հիմնարկի բնույթ տալու:

Մոցմբցման և հարվածայնութեան մեթոդներով, չեֆութեան ազատագործումով, աշխատանքի փորձի փոխանակմամբ, մասսայական արշավի անցկացնելու աշխատանքը կղրվի անհրաժեշտ բարձրութեան վրա և կապահովի անցկացման խնդիրները:

Արշավի հաջողութունն առավելագույն յախով կապված կլինի նրանից, թե ինչպես գործնակաճում կկազմակերպվի աշխատանքը,

կախված կլինի արդյունավետ աշխատանքային ծրագրից, վորի մեջ ուշադրութունը կկենտրոնացվի կարևորագույն մոմենտների վրա:  
Ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հաշվառալ, ինչ պետք է անել կոնկրետ, ինչպես է գրույթը և այլն:  
Դա բերված է ցածում սղմված ձևով:

### 5. ՈՃԱՆԴԱՅ ԿԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

#### Ա) ՄԱՍՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐՈՒՅՅՈՒՆԵՐԸ

1. Մասսայական արչավը տարվում է նպատակ ունենալով լայն կերպով բացատրելու և պրոպագանդա անելու ՈՍՀՄ խնայողական դործի խնդիրները, նամանավանդ այն հարցերը, վորոնք կանգնած են խնայողամարկդների առաջ հնդամյակը չորս տարում ավարտման, խնայողամարկդների կադմատեխնիկական ամրացման համար:

2. Մասսայական արչավը ձևակերպելու, հիմնարկներ, կոլեկտիվներ, սոցիալիստներ, գյուղում պետք է տարվի վորպես մեծ հասարակական-քաղաքական կամպանիա, ներգրավելով բոլոր հասարակական կադմակերպութունները և կոլեկտիվի անդամների մասնակցութունն արչավի աշխատանքներում:

Արչավը մասսայական կլինի միայն այն դեպքում, յեթե նրա մեջ ահտիվ կերպով մասնակցեն բանվորական, ծառայող, կոլտնտեսական, անհատ և այլ աշխատավորները:  
ՈՃԱՅԻ

### 3. ԱՐՇԱՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՅՈՒՆԵՐԸ

ա) Ամրացնենք խնայողամարկդի սպարատը կադմակերպչներն և տեխնիկային:

բ) Ստեղծենք խորհրդային կոլտուրական խնայողամարկդ:

գ) Վոչնչացնենք բյուրոկրատիզմի մնացորդները խնայողամարկդում:

դ) Ապահովենք միջոցների մոբիլիզացիայի պլանի կատարումը:

յե) Ապահովենք ավանդատուների և պարտատուս ունեցողների կատնայոր: պատարկումը:

զ) Կադմակերպենք խնայման լայն պրոպագանդա:

4. Արչավը տարվում է ծախսված սոցմրցման և հարվածախուժյան նշանաբանի տակ, կիրառելով հետ մնացող կոլեկտիվների նկատմամբ, հասարակական բուկարի և սոցիալիստական ողնության ձևերը:

5. Յուրաքանչյուր բանվորի և ծառայողի կոլեկտիվին կից ոժանդակ հանձնաժողովը պատասխանատու յե մասսայական արչավի ծովայման համար՝ վոչ միայն իր կոլեկտիվի անդամների մեջ այլև իր յենթաշեֆ կոլտնտեսության կոլտնտեսականների կամ գյուղի անկադմակերպ բնակչության մեջ արչավը տանելու համար:

6. Կոլտնտեսության կից յուրաքանչյուր ոժանդակ հանձնաժողով պատասխանատու յե մասսայական արչավի ծովայման համար վոչ միայն իր կոլտնտեսության անդամների մեջ, այլ նաև անհատ անտեղությունների մեջ արչավը կադմակերպելու համար:

Կոլտնտեսական հասարակախուժյունը հանդիսանում է մասսայական արչավի սկողները, նրա կադմակերպողները գյուղում:

### Բ) ԿՍՄՊԱՆԵՍՅԻ ԾՐԱԿԻՐԸ

1. Յուրաքանչյուր ոժանդակ հանձնաժողով պետք է կազմի իր կալեկտիվում, կոլտնտեսությունում, գյուղում, մասսայական արչավն անցկացնելու սրացուցային ծրագիր:

2. Ծրագիրը պետք է նախատեսի այնպիսի միջոցառումներ, վորոնք ապահովեն արչավի առաջ դրված խնդիրների կատարումը, նախատեսված միջոցառումների ժամկետները և կատարողը:

3. Ծրագրի կատարման նկատմամբ պետք է սահմանվի ամենօրյա հսկողություն, վորը հանձնարարվում է ոժանդակ հանձնաժողովի անդամներից մեկին:

Մասսայական արչավի ընթացքում ոժանդակ հանձնաժողովի յուրաքանչյուր նիստում լսվում է առանձնացված ընկերոջ խնդրամացիան՝ ծրագրի կատարման ընթացքի մասին:

4. Ծրագիրը կազմվում է հնդորյակներով այն հաշվով, վոր ամեն հնդորյակում իրականացվի ընդհանուր ծրագրի մի մասը:

Առանձին հնդորյակներով ծրագիրը կարող է կազմվել մոտավորապես հետևյալ ձևով. —

Առաջին հնդորյակը նվիրում է մասսայական աշխատանքին. մաբիլիզացիայի յե յենթարկվում ակտիվը, վորը բաշխվում է բոտ բրիգադներին, բաշխվում է աշխատանքը բրիգադների մեջ. առանձնացվում են հասարակական հրահանդիչները, փակցվում են լոզունդները, պլակատներ, կադմակերպվում է պատի թերթը. հրավիրվում են ժողովներ, միախնդներ, կոնֆերանսներ, կադմակերպվում է սոցմրցումն, ժամոնակավոր շեֆություն:

Յեղիորդ և յերրորդ հնդորյակները նվիրում են ավանդատուների ներգրավման, ավանդատուների գրավման համար առանձնացվում են լիազորներ ցիխերից. անց է կացվում նրանց հրահանգումն, առանձնացվում են բրիգադներ ընդդրկելու համար անկադմակերպ բնակչության և գյուղին ողներու, անց է կացվում անհատական այցելություն կոլեկտիվի անդամների մոտ, նրանց խնայողամարկդի ավանդատու գարծենելու համար:

Առանձնացվում են առանձին բրիգադներ խնայողամարկդի աշխատանքը ստուգելու համար (խնայողամարկդի մաքրության, աշխատանքի բաշխումը նրա սպարատում, աշխատանքի ժամերը, վերաբերմունքն ավանդատուների նկատմամբ և այլն):

Ստուգվում է շենքի պիտանիությունը և նրա արտաքին ձևախորուժը և կատարվում է խնայողամարկդի շենքի մաքրումը. անհրաժեշտ դեպքում հարց է գրվում համապատասխան կադմակերպության առաջ լավ շենք հատկացնելու համար և այլն:

Չորրորդ և հինգերորդ հնդորյակները հատկացվում են ավանդատուների գրավելու աշխատանքի վերացման. հրավիրվում են հին ավանդատուները և նոր ընդգրկվածների կոնֆերանսիա:

Պարզեատարվում են արչավի ակտիվ աշխատողները, սպարկվում է տնտեսական նամակներ վոչ բավարար, կամ ամենևին խնայողամարկդից չոգտվող կոլեկտիվի անդամներին:

Առանձնացվում են ներկայացուցիչներ խնայողամարկդին կից ավանդատուների խորհրդի համար, կադմակերպվում է փոխառության



ապրտած տոմսերի մասսայական ստուգումն խաղաղիւթյան աղյուսակներով և այլն :

Վեցերորդ ենգորդակը հասկացվում է ախտի վարացման, ախտի վիճակի հաշվառման նրա աղիտ անդեկատու նյութերով մատակարարելուն, ախտի վիճակների ընդհանուր ժողովրդ է հրավիրում (ներառյալ հասարակական հրահանգիչներին) արշավի աշխատանքների արդյունքների և նրա նվաճումների ամբողջական մասին ղեկավարումներ դնելու համար : Ախտի վիճակների հրահանգումն . հետագա շրջանի կապի կազմակերպումն և այլն :

Գ) ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Ռժանդակ հանձնաժողովը պետք է կազմվի խնայողամարկղի հետ . սաանա նրանից արշավի բոլոր ուղիսացիտն և սպերատիվ նյութերն :

2. Ռժանդակ հանձնաժողովը պետք է՝

ա) Հ. Ա. Միուեթ. Թորհրդի 1931 թ. դեկտեմբերի 21-ի ռժանդակ հանձնաժողովների ընտրությունների մասին ունեցած վորոշման համաձայն, կատարել իր կազմի վերընարություն այն դեպքում, յերբ ռժանդակ հանձնաժողովը չի վերընարված :

բ) Ստուգել իրենց զեխային լիազորներին, իսկ դյուղական վայրերում—դյուղերում, նրանց աշխատունակության տեսակետից և տանձնացնել լիազորներ այնտեղ, ուր չկան այդպիսիները :

3. Ռժանդակ հանձնաժողովները՝

ա) Արշավի մասին հարց են դնում դործարկումում և կուսքիջում, դյուղխորհրդում, նրանց հաստատման ներկայացնելով արշավի անցկացման ծրագիրը :

բ) Հրավիրում են ախտի վր և մանրամասն ինֆորմացիա յին ապիտ մասսայական արշավի և նրա անցկացման կարգի մասին :

գ) Արշավի սկզբում դյուղխորհուրդին կից ռժանդակ հանձնաժողովը հրավիրում է հատուկ ժողովներ :

1. Զբաղորական սկիտիվ և՝

2. Կանանց պտտազամպոներին՝ նրանց դործնական մասնակցությանը արշավի համար կազմակերպելու :

3. Կոլտնտեսության կից ռժանդակ հանձնաժողովը կոլտնտեսության կոլտնտեսության վարչության հետ միասին հրավիրում են՝ կոլտնտեսական ախտի վիճակի և կալանտեսականների և հարվածայինների ժողով և ջննում են արշավի անցկացման հարցը :

4. Կոմբիջի համաձայնությամբ ռժանդակ հանձնաժողովը նշում է ղեկավարողներ ինչպես ընդհանուր, նույնպես և խմբային ժողովներում, անցկացնելով ժողովներում նման գրույցներ մասսայական արշավի համար :

5. Կոլտնտեսության ռժանդակ հանձնաժողովը իր անդամների ախտի վիճակներից և հասարակական հրահանգիչներից ամբացնում է կոլտնտեսության առանձին խմբակների և բրիգադների՝ նրանց մեջ աշխատանք տանելու համար :

Հրահանգում է ստանձնացված բնիկներին, մասսակարարում է

նրանց անհրաժեշտ աղիտ-նյութերով : Արշավի սկզբում ռժանդակ հանձնաժողովը կատարում է ախտիչներ, լազոնդներ և այլն :

6. Ռժանդակ հանձնաժողովը բլիջի և դործարկումի համաձայնությամբ—քաղաքում, իսկ դյուղում բլիջի և դյուղխորհուրդների՝ լույս է ընծայում թերթի հատուկ համար՝ նվիրված մասսայական արշավին :

Այս նույնը սնում են կոլտնտեսություններին կից ռժանդակ հանձնաժողովները :

Դ) ԺՈՂՈՎՆԵՐ

1. Արշավը պետք է սկսվի ընդհանուր ժողովներից :

2. Ժողովները պետք է անցկացվեն քաղաքում—յուրաքանչյուր կոլեկտիվում, շրջաններում—դյուղերում, կոլտնտեսություններում, կալանտեսության բրիգադներում :

Ժողովներն անց են կացվում նախորդ վորոշված ժամկետներում :

3. Ժողովները պետք է ինամբով նախապատրաստվեն . մինչև ժողովը պետք է տարվի լայն ինֆորմացիա, հրավիրվող ժողովի մասին, փորպեսպի ապահովվի կոլեկտիվի անդամների 100% ներկայությունը :

Ժողովի որը նպատակահարմար է կազմակերպել ձեռնարկներին (կոլտնտեսության ցանքի աշխատանքների) այցելություն պատկոմներին և դարոցականների միջոցով :

4. Ընդհանուր ժողովում ձեռնարկվում են ավանդատուների և ավանդների հանդիպական պլանները :

ՅԵ) ՄՈՑՄՐՅՈՒՄԸ

1. Ձեռնարկներին, հիմնարկներին, դյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին կից ռժանդակ հանձնաժողովները կազմակերպում են սոցմրցում՝ մասսայական արշավ լավ տանելու համար :

2. Սոցմրցումը կազմակերպվում է բանվորների և ծառայողների կոլեկտիվների միջև, կոլտնտեսականների և անհատական սեկտորների միջև, առանձին դյուղխորհուրդների միջև, հիմնարկների և ձեռնարկների միջև, ձեռնարկների առանձին մասերի (ցեխ . բրիգադ) միջև :

Կոլտնտեսական սեկտորում մրցումը կազմակերպվում է Ֆերմաների, բրիգադների, առանձին կոլտնտեսությունների նույնպես և մեքենա-տրակտորային կայանների և խորհրդային տնտեսությունների միջև :

3. Սոցմրցման հիմնական ցուցանիշները պետք է լինեն՝

ա) Կոլեկտիվի անդամների (իսկ դյուղում կոլտնտեսականների և անհատների 100%—յա ներգրավում խնայողամարկղի ավանդատուիչարքերը :

բ) Բորոշակի ժամկետին (մոտավորապես ապրիլի 1-ին) ավանդի մեծ մնացորդ :

գ) Աղիտ մասսայական աշխատանքի լավագույն կազմակերպումն :

դ) Ավանդատուների և պարտատոմսեր ունեցողների տեղեկություններով և խորհուրդներով լավագույն ուղտարկում :

յե) Ռեալ ոգնութիւն խնայողամարդկներին՝ խորհրդային կուլ-տաւրական հիմնարկ դառնալու համար:

4. Ոժանդակ հանձնաժողովը նախադատրաստում է սոցմրցման պայմանագրի նախագիծը և նշանակում է այն կոլեկտիւնները, վոր կան-չում են մրցման: Պայմանագիրը ընելում է ընդունելում է ընդհանուր ժողովներում:

5. Սոցմրցման կատարման ընթացքի վրա սահմանվում է հսկո-ղութիւն, վոր անց է կացվում այս նպատակով, ակտիվի ստանձնաց-ված բրիգադներին կողմից:

Պայմանագրերի կատարման արդյունքների մասին ինֆորմացիա յե տրվում ընդհանուր ժողովներում: Այս նույն նպատակի համար պետք է լինեն հատուկ տախտակներ, սոցմրցումը լուսարանվում է նույնպէս և պատի թերթում:

2) ՇԵՖՈՒԹՅՈՒՆ

1. Մասսայական արշավի շրջանում քաղաքի բանվորական կոլեկ-տիվների ոժանդակ հանձնաժողովը շեֆութիւն է վերցնում այն շրջանի — գյուղի, կոլտնտեսութեան ոժանդակ հանձնաժողովի նկատմամբ, վորի շեֆն է հանդիսանում ավյալ ձեռնարկը:

Շեֆի ոգնութիւնը գյուղական հանձնաժողովներին պետք է տար-վի հետևյալ ձևով՝

ա) Իրեն յենթաշեֆ հանձնաժողովին մասսայական արշավն անց-կացնելու որինակելի պլան ուղարկել:

բ) Մատակարարումն ազիտ-նյութերով:

գ) Կենդանի հրահանգման ապահովումը, հանդատի որերում յեն-թաշեֆ շրջան ուղարկելով հանձնաժողովների անգամներին և ակտի-վիստներին, ինչպէս և արշավի հարցերով զբաւոր ոգնութեան հաս-նելը:

2. Գյուղխորհուրդներին և կոլտնտեսութեաններին կից ոժանդակ հանձնաժողովները պետք է կապվեն իրենց շեֆի հետ և պահանջեն նրանից ակտիվ ոգնութիւն, արշավը տանելու համար:

Ե) ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՈՒՔՍԻՐԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ:

1. Յուրաքանչյուր ոժանդակ հանձնաժողով (քաղաքային և գյու-ղական), վոր իր արշավը հանդութեամբ է տարել պետք է բուքսիրի վերցնի մեկ յերկու ձեռնարկի, գյու շխորհուրդի, կոլտնտեսութեան ոժանդակ հանձնաժողովներին, վորտեղ արշավը թույլ է ծավալվում:

2. Բուքսիրի վերցրած հանձնաժողովը բրիգադներ և առանձնաց-նում հետ մնացող կոլեկտիվներին գործնական ոգնութիւն ցույց տա-լու համար:

3. Բրիգադան հրավիրում է հետ մնացող կոլեկտիվների հանձնա-ժողովի հատուկ նիստ և նրա հետ միասին մշակում է աշխատանքի ծրագիր՝ հետ մնացող ձեռնարկում, հիմնարկում, գյուղում, կոլտնտե-սութեանում արշավն ուժեղացնելու համար:

4. Հասարակական բուքսիրը և սոցիալիստական ոգնութիւնն ի-րականացնող հանձնաժողովը իր վրա յե վերցնում նշված միջոցառում-

ներին կատարումն իր ուժերով ներդրաւելով յենթաշեֆ կոլեկտիվի ակտիվին:

5. Իր վերցրած պարտավորութեանների կատարումը ոգնող հանձ-նաժողովը պետք է սահմանափակի վորոչ ժամանակով:

6. Բուքսիրի արդյունքների մասին դեկլարումներ են տրվում ինչ-պէս շեֆ, նույնպս և յենթաշեֆ կոլեկտիվներում:

Ը) ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԸ

1. Ամբողջ արշավի ընթացքում ոժանդակ հանձնաժողովները պետք է սերտ կերպով կապված լինեն պատի թերթերի (նամանակաւոր մեծ օրաթ ունեցող) խմբագրութեանների հետ, թերթերը՝ արշավի ակտի-վիզացիայի նպատակով սիստեմատիկ ոգտադրուծելու համար:

2. Ոժանդակ հանձնաժողովը ապահովում է՝

ա) Հատուկ պատի թերթի հրատարակումը արշավի սկզբում:

բ) Պատի թերթում, արշավի ընթացքում — հատուկ անկյուն ար-շավի ընթացքը լուսարանելու համար:

գ) Մասսայական արշավի սոցմրցման ընթացքը լուսարանելը, այս նպատակով թերթում, սահմանվում են կարմիր և սև տախտակներ:

դ) Տվյալ կոլեկտիվին սպասարկող խնայողամարդի կազմա-տեխ-նիկական ամրացման ընթացքի հարցերի լուսարանումը:

Արշավի ամբողջ ընթացքում պատի թերթի խմբիկին պետք է կցվի ոժանդակ հանձնաժողովի մեկ անդամ, վորի պարտականութեանների մեջ մտնում են՝ արշավի հետևելը և նրա ընթացքի լուսարանումը պատի թերթում:

Թ) ԲՐԻԳԱԴՆԵՐ

1. Արշավի անցկացման գործում ակտիվ լաւագույն ձևով ոգտա-գործելու համար ոժանդակ հանձնաժողովներն ստեղծում են ակտի-վիստների բրիգադներ՝ արշավին առանձին հանձնարարութեաններ կա-տարելու համար:

2. Բրիգադները պետք է առանձնացվեն յենթաշեֆերում բուքսի-րի յենթարկիվող գյուղի կոլտնտեսութեան. առանձին մասերի սպասար-կելու համար (մասնավորապէս անկազմակերպ բնակչութեան):

3. Յուրաքանչյուր բրիգադներին տրվում է վորոշակի հանձնա-րարութեաններ: Բրիգադներին միջև կազմակերպվում է մրցութիւն:

4. Հասարակական հրահանգիչներին մի մասը պետք է գրվի վե-րև կանգնած ոժանդակ հանձնաժողովի տրամադրութեան տակ:

Ժ) ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. «Հնգամյակը 4 տարում» և «Հնգամյակի յերրորդ վճռական տարվա» փոխառութեան շեֆի խաղարկութեանների արդյունքները պետք է ոգտադրուծվեն վոսսայայան արշավը ծավալելու համար:

2. 10-ին մարտի 1947 թ. «3-րդ վճռական տարվա» փոխա-ռութեան 2-րդ խաղարկութեանը: Այս խաղարկութեան նախապատրաս-




տաճը, նրա ունեցիւոցման և արդյունքների լուսարձնումը պետք է կազմէն մասսայական արշավի ամբողջ աշխատանքի հետ:

3. Յուրաքանչյուր խաղարկութեանից հետո պետք է կազմակերպել չափած տոմսերի մասսայական ստուգում:

Ստուգումն ըստ հնարավորութեան պետք է կազմակերպել բանփորների, ծառայողների, կոլտնտեսականների (նամանակաւոր դրում) աշխատանքի վայրում և տներում:

4. Հայտնաբերած չափումների դումարները պետք է վճարել համդիսաւոր պայմաններում, կազմակերպելով դրա համար մասսայական արշավին նվիրած հատուկ յերեկույթներ:

5. Յուրաքանչյուր խաղարկութեան հարց պետք է ընդարձակ կերպով հանրայնացվի ժողովներում, լուսարանելով այդ հարցերը պատրի թեքթում, լրզունդներ և աֆիշներ կախելով և այլն:



11

27186